

Է. Մխիթար-Վանկ

ՄԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒ-
ԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԶԱՔԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Մի երեք և վրոց իրավունքի պատմությունից)

Մեր՝ թե՛ օրենսդրական-իրավական (նորմատիվ) և թե՛ պատմական (նարմատիվ) աղբյուրները շատ քիչ տեղեկություններ են պահպանել ֆեոդալական Հայաստանում եղած ոչ միայն լեռնաշխարհի, այլ և սովորական դատակազմության և դատավարության մասին:

Մխիթար Դոշի Դատաստանագիրքը թերևս միակ աղբյուրն է, ուր լեռնաղբյուրության 11 զլուխների մեջ մանրամասն խոսվում է մեզ հետաքրքրող շարքի շուրջը,¹ սակայն այն ոչ մի պատկերացում չի տալիս գերադույն դատակազմության և դատավարության արտակարգ մոմենտների, ինչպես և այսպես կոչված jus appellationis-ի կամ թե՛ բեկման իրավունքի զոյության մասին հին Հայաստանում:

Հայ իրավունքի պատմության ուսումնասիրության նվիրված մասնագիտական գրականության մեջ ևս ոչ մի հետադոտողի կամ հրատարակչի մաքուր անգամ չի անցել ծանրանալ այսպիսի մի խնդրի վրա: Այսպիսի են՝ Ղուկաս Վ. Ինճիճյանի «Հնախօսություն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» (հ. II, Վեն., 1835, էջ 308—310), Ա. Մ. Գարազաշյանի «Քննական պատմություն Հայոց» (մասն I, Թիֆլիս, 1895, էջ 10—17), Josef Kohler-ի «Das Recht der Armenier» և «Grundriss der Geschichte des armenischen Rechtes» (Zeitschrift für vergleichende Rechtswissenschaft, VII B., 1887, SS. 385—436, XX, B., 1907, SS. 93—99), Josef Karst-ի «Sempadscher Kodex aus dem 13. Jahrhundert» (Strassburg, 1905, SS. 339—400), Քաչիկ Սամուելյանի «Մխիթար Դոշի Դատաստանագիրքը և հին հայոց քաղաքացիական իրավունքը» (Վիեննա, 1911, էջ 109—178) և «Հին հայ իրավունքի պատմությունը» (հ. I, Երևան, 1939), Վարդան Վ. Հացունու «Երգուն հին Հայոց մեջ» (Վենետիկ, 1910) ևն:

Այսպիսի պայմաններում միանգամայն պարզ պիտի լինի և հասկանալի արժեքն այնպիսի տեղեկությունների, որ պատահմամբ հասել են մեզ մեր պատմիչների վկայությունների ձևով: Ինչպիսի է, օրինակ, Սյունեցի Ստեփանոս Օրբելյանի հաղորդածը Զաքարյան Հայաստանում տեղի ունեցած մի արտակարգ երևույթի մասին:

¹ Դատաստանագիրք Հայոց, հրատ. Վահան Վ. Բաթաթեան, Վաղ., 1880, էջ 5—75:

Իր «Պատմութիւն Տանն Սիսական» նշանաւոր երկի մեջ՝ խոսելով նորաւանքի «դերահոյակ և փառաւոր ուխտի» «շինութեան և նախապատիւ գահերիցութեան», ինչպես և «հոգեցատուր ժառանգութեանց նորա (նորութեանքի) և այլ շինութեանց և արդեանց» մասին, «որ եղև ի Լիպարտէն և յիշխանացն Ռրէլեանց» (զլ. 63 [64] և 64 [65]), Սա. Ռրելյանն առանձնապես կանգ է առնում «աստուածընկալ» և «սքանչեւգործ» սուրբ խաչի շուրջը նորաւանից և Պղնձահանից, ասել է հակաքաղկեդոնիկ (հայադաւան) և քաղկեդոնիկ (վրացադաւան)՝ վանքերի միջև Հայաստանում առաջացած վեճի նկարագրութեան վրա, որի լուծման համար գերաւորէին պետական իշխանութեան կողմից նպատակահարմար և անհրաժեշտ համարվեց դատաստանակալ գերաւորէին մարմին ստեղծելը և զորքն արաակարգ ձևով քննելու:

Սակայն նախ քան այս դատաստանական վերագոյն աայանի մասին մեր եզրակացութեւնները հանենք, ծանոթանանք գործի էութեան հետ՝ համաձայն Սա. Ռրելյանի վկայութեան:

1

«Եւ մահուան տեառն Յովհաննիսի... ի թուին Հայոց 663 (= 1214)... եկն աէր Սահփանոս շնորհագարդն, որ և Դախըրէլմսեհ կոչեցաւ ի Աթարակէն, և բնակեցաւ ի սուրբ ուխտն Նորաւանից... Եւ ի 664 (= 1215) թ.» էր տեառն Սահփանոսի եղեալ գրաւական դատաւածամասի սուրբ նշանն, զաէր Սովհաննիսի [նորաւանից հանգուցեալ եպիսկոպոսի]՝ զաւագ խաչն և զթիթեղնակապն և զկամարակապն... Զոր և իմացեալ կողմնակալի այսմ կողմանց Վասակայ իշխանի՝ իոր Պողոսայ, առնու բռնաբար գերիս զայս աստուածացեալ սուրբ նշանն և տարեալ զաւագ խաչն ընծայէ Աթարակէն Իվանէի և գերկուսս՝ զթիթեղնակապն և զկամարակապն տարեալ զնէ յիւրում վանսն ի Կեչառուս ուխտի Ապա ի 665 թուականին (= 1216) մինչ կայր Աթարակէն Իվանէ ի խառլ՝ ի վերայ բերդոյն, որ Զարէն կոչի, զնայ աէր Սարգիս Նրամանաւ և զրով բեռնոյն իւրոյ աէր Սահփանոսի առաջին Աթարակէն ի խնդիր աստուածընկալ սուրբ խաչին: Եւ զի էր նորս զործակալ և հրամանաւար ի վերայ ամենայն իշխանութեանց իւրոյ և աւագ հէջիւսաց մեծ և բարեպաշտ իշխանն Բուսակ կոչեցեալ. և էր սա աներ Լիպարտի՝ որդւոյ Ելիկումին, և Լիպարտին յոյժ սիրեցեալ էր յաւս Իվանէի. և խաչն կայր ի պահեստի ի Պղնձահանքն:

«Թանգիման առնեն զեպիսկոպոսն Աթարակէն և մատուցանեն զգիրն. և ինքեանք մեծազնւ հոգ յանձին կալեալ ջանացին թափել զգերեալն. և բազում գանձս ծախեալ ի մեծամեծան և ի ներքին խորհրդականն: Բարեպաշտ Լիպարտ 500 զահեկանի շափ ընծայէ և ողերս Աթարակէն 500 զահեկան կարմիր յազնուական ոսկւոյ, և այնպէս իբր գնոյ առնելով հանգեալ զմիաս նորա դարձուցանել անգրէն: Ապա Նրամայէ կոչել զեպիսկոպոսն և զնէ պայման նմա և ասէ, «Եթէ որ կամի գորոյ նշանին անգրէն գառնալն՝ աացէ վաղիւն զբերդս զայս ի ձեռս իմ, և ես աամ զնա ի ձեռս քո, ապա թէ ոչ՝ դատնաս ունայնս:

«Իսկ ընդ լուսանալ առաւօտուն՝ զորութեամբ սուրբ խաչին, բերեն բերդացիքն ինքնայոժար կամօք գրանալի բերդին և զնեն առաջի Աթարակէն: Բերեն ընդ նմին այլ ևս երիս բանալիս բերդից. և զնեն առաջի Ընդ որ յոյժ խնդացեալ և դարձալեալ ընդ սքանչելիսն՝ Նրամայէ աւագ ծիկնաւաբին իւրոյ զիւանին Անափրէ անուն զնալ ընդ տեառն Սարգիսի և աալ զխաչն ի նա ի Պղնձահանքն ուխտի, որ և առ ժամայն կատարեցաւ: Եւ նորա զնացեալ առնալ զխաչն խնդութեամբ, և անցեալ փութանակի զայ, հասանէ ի նորաւան ուխտ. և բնակեցուցանէ անդէն զսուրբ նշանն. որ և եղիւ վախճանեալ զբերին իւր աէր Սահփանոս: Բայց առաւ ի զինս գերեալ խաչին ի Լիպարտէ 1000 զահեկան կարմիր, որպէս ասացաքն: Իսկ թիթեղնակապն և կամարակապն Յեացին անգլն ի Կեչառուս:

1 Այսինքն՝ ի պաշարումս:

II

«... Լինի աղմուկ վասն սուրբ խափն և գնան երկուքին եպիսկոպոսքն (այսինքն՝ Ստեփանոս և Սարգիս) և Լիւղարիան և որդիք իւր ճիկումն ի գատաստան առ Աթարկի Իվանէն ի Դվին։ Եւ նորա նստուցեալ զմեծամեծս իւր հրամայէր քննել զԲուզական և զՄարծուանն, զԻվան զպէլն և զՄեծՅեաշաղէն։ զմեծ ճղանդիտէլն՝ որ եկեալ էր ի թագաւորութենէն, զծիրամ ծղաւրն Վարձէոյ և զծիրամ ծղաւրն Պղնձահանիցն և զմեծ մամթաւարն Դարչաէուցն, զԴադեցին և զՄածնաբերդեցին և այլ բազում զէջեպուլք եւ և զդաւաին Տփղեաց և զդաւաին Անուոյ և զդաւաին Դվնայ և զանուանի չեխն Սուրմարուոյ, ընդ ուրոց և զմեծ եպիսկոպոսն Անուոյ և զեպիսկոպոսն Բջնուոյ և զեպիսկոպոսն Հաղբաւայ, որք և բրննեալ իրաւունք դատեցան այսպէս եթէ՝ Մեռեալն և գերեալն զմի ունին օրինակ, որ քո զմեռեալն յարաւցանէ՝ ոչ է ծնողացն ծնունդ, այլ նորոգողին գնա։ և որ ոք զգերեալն թափէ, ոչ է սաացողին յայնմհեալէ, այլ զերաթափին։ Արդ, որպէս աշխարհս այս առմամբ սրոյ և ձեռն սեպական կողի ժառանգութիւն Վրաց թագաւորութեան, այնպէս և այն խաչ սեպական էր Իվանէի և ի տալն գնա ի Լիւղարիս և ի տէր Սարգիս բազում ծախուք մինչ ի 1000 դահեկան։ Լիւղարիս և իւր եկեղեցւոյն է պարտ լինել յաւիտեական ժառանգութիւն։

«Ապա այսմ դատաստանի յոյժ հաճութեամբ հաւանեալ Աթարկիին և ամենայն բազմութեան ազատակոյտ իշխանացն՝ հրամայեցին ունել զխաչն անդային և անհամբաղ Լիւղարիս և իւրոցն»։¹

* * *

Ստ. Օրբելյանի հաղորդագրութիւնը, ինչպիսի տեսնում ենք, բաղկացած է 2 հիմնական մասից. առաջինում արված է դործի եղելութեան պատմութիւնը, իսկ երկրորդում՝ դատաստանական արտակարգ ատյանի կազմի և դատավարութեան նկարագրութիւնը։

Երկրորդ մասն ևս, իր հերթին, ի նկատի ունի 3 մոմհնաւ. 1. դատաստանական ատյանի կազմը, 2. այդ կազմի կայացրած դատավճիռը, և 3. վերջինիս հաստատումը գերագույն պետական մարմնի կողմից։

Այժմ անցնենք Ստ. Օրբելյանի վկայութեան մանրամասնութիւններին։

Պատմիչի հիշատակած վեճը ծագել է Իվանե Աթարակի օրոք, 1215 թվին, հետեապես՝ Վրաստանում Դիորգի Լաչայի թագավորութեան (1213—1222) և Սյունիքում Վասակ իշխանի կողմնակալութեան պահին։

Վրճելի առարկան հղել է Լիւղարիտաշեն նորավանքի «գերահոյակ և փառաւոր ուխտին» պատկանող «աստուածընկալ սուրբ նշանը», այն է՝ «սքանչելագործ խաչն», որ մի ժամանակ գրավական է եղել զրված հիւշալ վանքում, իսկ 1216 թվին Վասակ իշխանը՝ խախտելով պայմանագիրը՝ հանել էր այն իր տեղից և ընծայել Իվանե Աթարակին, որ և դրել էր այն «ի պահեստի ի Պղնձահանքն»։ Հայցողի գերում հանդես են գալիս Ստեփանոս և Սարգիս՝ նորավանքի եպիսկոպոսները՝ Լիւղարիս Սյունյաց իշխանը և նրա որդի Ելիկումը։ Պատասխանորդի դերումն է Պղնձահանքը, Դատավարութեան տեղն է Դվին քաղաքը։

Դատաստանական ատյանը՝ ճանաչելով, որ «այն խաչ սեպական էր Իվանէի», սակայն ի նկատի առնելով, որ նախ քան այդ՝ Լիւղարիս իշխանը և նորավանքի Սարգիս եպիսկոպոսը «բազում ծախուք մինչ ի 1000 դա-

¹ Ստեփանոսի Միւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, ի յոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկովա, 1861, էջ 257—261։ Պատմութիւն նահանգին Սսական արաբեալ Ստեփանոսի Օրբելյան արքեպիսկոպոսի Սիւնեաց. Թիփլիս, 1910, էջ 352—356։

² Հմմ. Ղ. Ալիբաև, Սիսական, Վեն., 1893, էջ 20։

հեկան» գիջեւ էին տն Նորավանքին, որոշում է, որ «Լիպարտի և իւր եկեղեցւոյն (այսինքն՝ Նորավանքին) և պարտ լինել յաւիտենական ժառանգութիւնն»։ Ապա ատյանի հանած դատավճիռը «յոյժ հաճութեամբ» հանուութիւն է ստանում Իվանե Աթարակի և «ամենայն բազմութեան ազատակոյտ իշխանացն» կողմից, այսինքն վաղեմացվում է և հաստատվում զերագույն պետական իշխանության կողմից։

Ինչ վերաբերում է դատաստանական ատյանի կաղմին, այն ըստ Ստ. Օրբելյանի վկայութեան բաղկացած է եղել ad hoc ժողոված 6 խալի ներկայացուցիչներից, որոնք են. 1. վրաց արքունիքը՝ հանձնաւ մեծ ճղաւն-դիաէլը-ի, որը եկեալ էր ի թագաւորութենէն», 2. վրաց աղնվականութեանը՝ հանձնաւ «Աննաշաղէ»-ի և «բաղում դէղնպուլ»-ների, 3. հայ աղնվականութեանը՝ հանձնաւ Բուպակ և Մարծուան իշխանների, նաև Գազի և Մաժնաբերդի տերերի, 4. վրացաղական (քաղկեդոնիկ) հոգևորականութեանը՝ հանձնաւ «Իվան դպէլը-ի, «Վարձէոյ» և «Պղնձահանիցն» թերամ ժղաւրն»-երի ու «Իւրշտէուցն» թամթավար»-ի, 5. հայաղական (հակաքաղկեդոնիկ) հոգևորականութեանը՝ հանձնաւ «Անուոյ» մեծ կպիսոպոս»-ի, նաև «Իջնոյ» և «Հաղբատայ» կպիսոպոսների, և 6. մահմեդական հոգևորականութեանը՝ հանձնաւ «Տփղեաց», «Անուոյ» և «Գվնայ» դատիւների և «Սուրմարվոյ» անուանի շեխ»-ի։

Հետևապէս, մահմեդական հոգևորականութեանը քրիստոնեական եկեղեցուն վերաբերյալ խնդրում նույնպիսի հեղինակութեամբ է եղել ոժտված, ինչպես վրացաղական և հայաղականները, որ այն ժամանակ գոյութեան ունեցող խոճի՝ կատարյալ աղատութեան վայելուն ապացոյցն է։

Հայկական և վրացական աղբյուրները, բարեբախտաբար, մեզ հնարավորութեան են տալիս և թե ոչ լիովին, գոնե հիմնականում հականե-հանվանե՝ ճշտել Ստ. Օրբելյանի հաղորդած ցուցակը, որ անցյալում թէ՛ ակաղ. Իվ. Ջավախիշվիլու և թե՛ մասամբ էլ մեր կողմից մի երկու կետում ուղիղ չի մեկնաբանվել, որի հետևանքով, օրինակ, Ստ. Օրբելյանի «Բուպակ»-ը վերածվել էր «դիղբուլը-ի» և «Մարծուան»-ը «մարդպան»-ի,¹ իսկ «Գարշտէուցն» մի դեպքում (1914 թ.) թարգմանվել է իբրև «Գարեսջիկ» (վրացերեն՝ «գարեսջիսա»),² իսկ մյուսում (1929 թ.)՝ կապվելով Գազի և Մաժնաբերդի հիշատակութեանների հետ՝ տվել է տարբերակ ձևակերպում հետևյալ իմաստով. «Իւրշտիի (?)», Գազի և Մաժնաբերդի մեծ հայրապետները»։³

1. «Իրաւյ արքունիքի ներկայացուցիչը՝ «մեծ ճղաւնդիտէլը»-ը՝ դա նույն աւաղ ծիկնաւաւարն... դիվանին Անաւփրէ անուն» կողմ անձնավորութեանն է, այսինքն վրաց արքունիքի ավագ դիվանադպիրը կամ դպրապետը և առաջին վեդիրը կամ վեդերապետը, որ վրացերեն կոչվում էր «մծիղնո-թարթ ուխուցիսի դա վաղիրթա ուպիրվեխսի», նույնիսկ «պրոտոպետրա-

¹ Իվ. Ջավախիշվիլի, *Վրաց ժողովրդի պատմութեանը, Վրացերեն*, II, Թբ., 1914, էջ 455. Հմտ. Լ. Մելիքսեթ-Բեկ, *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*, II, Երևան, 1936, էջ 67.

² Դույն տեղ.

³ Իվ. Ջավախիշվիլի, նույն տեղ, էջ 655. Նույնի—Վրաց իրավունքի պատմութեանը, Վրացերեն, II, Թբ., 1929, էջ 480.

տիմոս, կամ պրոտոպերաիմոս,¹ որ սովորաբար կապված էր Մարտ-վիլիի եւսմ Ղզ զնդիլիի (Սամիկընդում) արքեպիսկոպոսական-մետրապոլ-տական կոչումն կրող աթոռակալի հետ: Ուստի և այլ եկեղեցականը կոչ-վում էր «ժզ'ոնդիլի», որ Սա. Օրրելյանի աստուգարձութեամբ «ճղաւն-դիտէլ»-ի է վերածվել, իսկ Հաղարծնի 1184 թ. մի արձանագրութեան մեջ նույնիսկ «ճղունտել»-ի, որ ոմանք սխալմամբ «ճղունաէլի» էին կարգում: Ի դեպ, նշենք, որ Հաղարծնի 1184 թ. արձանագրութեան մեջ հիշված «ճղունաւի»-ն Անտոն (Անտոնի) անունն է կրում, մինչդեռ Օրրելյանի մասնանշած 1216 թ. ատյունին մասնակցողը եղիլ է Աւնաւիրէս-ն, այ-սինքն Օնտիրեն, որ հայերենում համապատասխանում է «Օնտիրիոս»-«Ոնտիրիոս»-ին:

2. Վրաց ազնվականութեան կողմից հիշված են «բագում գէղեպուլք», այսինքն մեծամեծներ—իշխաններ և, մասնավորապես, «Մեթնաշաղէլ»-ը, որ նույն՝ Օրրելյանի պատմութեան մեջ այլուր (գլ. 65[66]) հիշված «Ջաղել-մեթնայ»-ն պիտի լինի, այսինքն «Մեթնա Ջաղելի»-ն կամ «Ջաղելի Մեմ-նա»-ն: Այս անձնավորութիւնը վրաց աղբյուրներում չի երևում:

3. Հայ ազնվականութեան ներկայացուցիչներից Բուպակ և Մարծու-անը քաջ ծանոթ են հենց հայկական աղբյուրներին:

Բուպակին Սա. Օրրելյանը անվանում է Իվանն Աթաբակի «գործակալ և հրամանատար ի վերայ ամենայն իշխանութեանց իւրոյ և աւագ հէջպագ, մեծ և բարեպաշտ իշխանն Բուպակ կոչեցեալ», որ էր «աներ Լիպարտի՝ որդւոյ Ելիկումին», նույնը հիշվում է Նորավանքի 1223 թ. վիճական ըն-դարձակ արձանագրութեան մեջ, ուր, ի միջի այլոց, կարգացվում է հետե-վյալը. «Ի ժամանակի թագավորութեանն որդւոյ Թամարին Լաշային, յա-միրսպասաւարութեան Իվանէի հաւրեղբար նորին եւ մեղուցեալ ծառայ-րիսառսի Բուպակ՝ իշխանաց իշխան, եկի ի նաւակատիս սուրբ եկեղեցւոյս Նորավանից առ երջանիկ հայրապետս մեր տէր Սարգիս և ընծայեցի ի հալալ հայրենեաց իմոց, զոր իմ բաղկաւս առեալ էի յայլաղգեաց և իմ արեամբս թափեալ զԱղբերիս գիւղ իւր ամէն սահմանուն, ի սուրբ եկեղեցիս Նորավանից՝ ի սուրբ Կարապետս և ի սուրբ Նախավկայս տուի աղատ յամէն հարկաց... ի թուին հայոց ՈՂԻ (= 672 [1223])»:²

Մարծուան կամ Մարծպանը հիշվում է Լոռի-Ջորապետի շրջանի մի շարք վիճական արձանագրութիւնների մեջ՝ «յիշխանութեան մեծի Մարծ-պանայ»՝ Դսեղի 1204 թ. ներքո, նաև Սանահնի 1211 թ. ներքո:³ «Նս Մարծպան, որդի Սարգսի, թոռն Համաղասպեանց, յաղղէ Մամիկոնեանց, շինեցի զվանս և զամէն եկեղեցիքս և արար ինձ տուն և գերեղմանատեղի»՝

¹ Սարգիս Կապաբան, Շիրակի մեծ երեք սիդի, վրացերեն, Քր., 1912, էջ 7:

² Իվ. Ջավախիշվիլի, Վրաց իրավունքի պատմութիւնը, II, էջ 124—140:

³ Л. Мелюксет-Бекон, Одна из подписей Агарцинского монастыря.— «Христ. Восток», т III, 1915, стр. 197—198. Է. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, I, Եր., 1934, էջ 221:

⁴ Ղ. Ալիշան, Սիսական, 186. Կ. Կոստանեանց, Վիճական տարեգիր, էջ 67. Հմմտ. Ե. Լալայան, Վրաց-ձոր նշանաւոր վանքեր—«Ազգագրական հանդէս», XXVI, 1916, էջ 20:

⁵ Ս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի մեծ Հայաստան I, 117—Կ. Կոստանեանց, Վիճական տարեգիր, 46:

⁶ Ս. Ջալալեանց, I, 24—Կ. Կոստանեանց, 52:

Դսեղի 1221 թ. ներքո՝ XIII դարու 30-ական թվականների վերջերից սկսած նույն շրջանի այլ արձանագրությունների մեջ հիշվում են Մարծպանի զավակները՝ «Գրիգոր որդի Մարծպանայ»՝ Դսեղի 1239 և 1241 թթ.,² և «Ասլանբէկ, որդի Մարծպանայ»՝ նույն Դսեղի 1245 թ.։

Իսկ Գագի և Մածնաբերդի (Մահկանաբերդի) տերերի անունները չեն հիշված։

4. Վրացադավան (քաղկեդոնիկ) հոգևորական դասից չհաշված ճգնադիպելուն, Ստ. Օրբելյանը անունով հիշում է միմիայն ժեկին՝ «Իվանե զպէլսին, մյուս երեքին լոկ կոչումով»։

«Իվանե զպէլսին»-ը՝ դա նույն Իվանե կամ Հովհան Տրեթի (Տալք-Կղարջ-քում) եպիսկոպոսն է, որ հիշատակված է Խամար թագունու ժամանակվա (1184—1213)՝ Տրեթի տաճարի մի երկաթագիր՝ վրացերեն արձանագրության մեջ։³

«Ծիրում ծղաւրն» ակնհայտ աղավաղումն է վրացերեն «ծինամձղուարին» կամ «ծինամձղարին»-ի՝ որ նշանակում է վանահայր, առաջնորդ վանից (ռուսերենում игумен, настоятель монастыря)։ Հետևապես դատաստանական ասյանի մասնակիցներից երկուսը, եղև են Վարձի (Մեսխեթ-Ջավախքում) և Պղնձահանքի (Լոռիի թե՛ Բջնիի)՝ Բաղկեղծնիկ վանքերի առաջնորդ-վանահայրերը։

«Մամթավար» ես աղավաղումն է վրացերեն «մամաթ-մթավարին»-ի, որ նշանակում է հայրապետ, պատրիարք, երեցապետ, բայց և նեղ մտքով՝ վանահայր, առաջնորդ վանից։ Ուրեմն «մեծ մամթավարն Գարշաթուցն» ասելով՝ Ստ. Օրբելյանը մասնանշել է Գարեսի (Ղարաթաղ կայարանից 30 կմ հեռավորությամբ, Կուր գ. ղեպի հյուսիս) «Բաղմալերանց» (մրավալմթա)՝ նույնպես Բաղկեղծնիկ անապատների վանահոր վրա, որ սովորաբար եպիսկոպոսի կամ առաքելապետ-մետրապոլիտի աստիճան է ունեցել և, ըստ այնմ, կոչվել է «ձեռնադրող արքիմանդրիտ» (մակուրթիսիլ-արքիմանդրիտի), որ ռուսերենում священно-архимандрит-ին է համապատասխանում։⁴

Ուսպիսով «մամաթ-մթավարին»-ն տարբերվել է «ծինամձղարին»-ից։

5. Հայադավան (հակաքաղկեդոնիկ) հոգևորականության աստիճանավորներից դատաստանական ասյանին մասնակցել են Անիի «մեծ եպիսկոպոսը», այսինքն «երիցապետ եպիսկոպոսը» կամ «արքեպիսկոպոսը», նաև Բջնիի և Հաղրատի եպիսկոպոսները։

Հիշյալ ժամանակամիջոցին (1216) Անիի արքեպիսկոպոսական աթոռը

¹ Ս. Ջալալեանց, I, 113—4. Կոստանեանց, 64։

² Նույն տեղ, I, 110, 114—5. Կոստանեանց, 81, 83։

³ Նույն տեղ, I, 108, 114—5. Կոստանեանց, 88—89։

⁴ Н. Марр, Дневник поездки в Шавшетию и Кларджетию, — «Тексты и разыскания по армянно-грузинской филологии», кн. VII, Спб. 1911, стр. 12.

⁵ Հմմտ. Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, VII, 1935, էջ 147 (ըստ մեր ցուցմունքի)։

⁶ Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, II, 64—69։

⁷ Լ. Մելիքսեթ-Բեկ, Դարևաջիի Բաղմալերանց հայկական էպիգրաֆիկան և պոլիգլոտ՝ վրացերեն-հայերեն-պարսկերեն-ռուսերեն արձանագրությունը, վրացերեն. — ИЯМК, V—VI (հորեկենական ժողովածու, նվիրված ակադ. Իվ. Ջավախիշվիլու գիտական զործունեության 40-ամյակին). Թբ., 1940, էջ 153—175։

գրաված է ունեցել Գրիգոր՝ որդի Ապուղամրի, որի անունը նշված է Անիի 1217 և 1218 թթ. հայերեն արձանագրությունների մեջ. առաջինում իբրև «արհիսպիսկոպոս»,¹ իսկ երկրորդում (նպիսիան վրաց կաթողիկոսի 1218 թ. վրացերեն արձանագրության հայերեն post scriptum-ի մեջ)²՝ «երիցապիս եպիսկոպոս».³ այսինքն «աւագ եպիսկոպոս» կամ արհիս:

Մյուս՝ զույգ եպիսկոպոսներից Ռջնիի լաթոռակալի անունը չի երևում, իսկ Հաղբատինը թերևս Հովհաննես Ուաչենեցին լինի, որ հայանի է Ձորագետի վիմական արձանագրություններից 1195—1226 թթ. շուրջը.⁴

6. Մահմեդական հոգևորականության ներկայացուցիչների, այն է Քրիստի, Անիի և Դվինի զազիրների ու Սուրմարվի անվանի շխխի անունները քննում են անհայտ:

* * *

Ահա այսպիսի ընդարձակ կազմով ղվինում 1216 թ. ժողոված աշխարհիկ և հոգևորական դասերի ներկայացուցիչները՝ իբրև արտակարգ գերագույն դատաստանական տալան՝ վճիռ են կայացրել Նորավանքի սքանչելագործ խաչի ում պատկանելու վիճելի խնդրի շուրջը, որ տպա հավանություն է գտել ու վավերացվել բարձր իշխանության կողմից:

А. Меликсет-Бек

По поводу одного свидетельства об устройстве и процессе высшего суда в Захаридской Армении

(Страница из истории армянского и грузинского права)

РЕЗЮМЕ

В связи с крайней скудостью данных как нормативного, так и нарративного характера относительно судоустройства и судопроизводства в феодальной Армении и отсутствием подлежащей полноты в соответствующей научно-правовой литературе, посвященной истории армянского процессуального права (Л. Инчян, А. Гарагашян, J. Kohler, J. Karst, X. Самуэлян, В. hАацун и др.), автором настоящей статьи дается попытка анализа свидетельства армянского исто-

¹ Դ. Արիան, Երբեք, Վեն., 1881, էջ 63—64:

² E. Brep, Les Ruines d'Ani—„Le Correspondant revue mensuelle“, 1-re Année—3-e livraison, Paris, 1843, p. 322; H. Mapp, Надпись Епифания, католикаса Грузии,—„Известия Академии Наук“, 1910, стр 143; Բ. Պրիլի, Անույ աւերակները, Վաղարշապատ, 1911, էջ 57 (=«Արարատ» տմազիր, 1911, ոգոստոս, էջ 666); H. Mapp, Ани, Книжная история и раскопки на месте городища. Л.-М. 1934, стр. 85 и табл. XLII, рис. 182; В. Дондуа, К социально-экономической жизни средневековой Грузии по Анийской надписи (1218) Епифания,—„Академия Наук СССР, XI-V, Академику Н. Я. Марру“, М.-Л. 1934, стр. 649; Իվ. Ջավախիզիլի, Սոցիալական պայքարի պատմությունը Վրաստանում IX—XIII դարերում, վրացերեն, Քր., 1934, էջ 11, Իվ. Ջավախիզիլի, Նյութեր Հայաստանի սոցիալական շարժումների պատմության համար, թարգմ. վրացերենից է. Մեխակ-Բեկ, Երևան, 1936 (1937), էջ 29:

³ Ս. Ջալալյանց, I, 46. Խոստովելզ երգելեան, Հնախոսական տեղագրութիւն Հաղբատոյ աշխարհահռչակ վանից, Վաղ., 1886, էջ 58. Կ. Կոստանեանց, Վիմական ասրեզիր, 63. I. Մելիքսեթ-Էլի, Վարդապետը Հայոց հիսիսային կողմանց, վրացերեն, Քր., 1928, էջ 175—177, 179:

рика XIII в. Стефана Орбеляна (Истории Сюнии, гл. 63 [64] и 64 [65]) по данному вопросу.

Свидетельство Ст. Орбеляна касается высшего судилища, созванного в чрезвычайном порядке, для рассмотрения спора, возникшего в 1215 г. между Норавапской антихалкедонитской (в Сюнии) и Пгндзапской халкедонитской (в Лори или Бджни?) обителями спора относительно Норавапского животворящего креста, который подарен был князем Васакем Сюнийским Иванэ Атабаку, а последним — Пгндзапскому монастырю.

Суд был созван по распоряжению Иванэ Атабака, с санкции грузинского царского двора, в гор. Двине в 1216 г. из многочисленных представителей светской и церковной иерархии, в следующем составе, как свидетельствует Ст. Орбелян: „Бупак и Марцуан, Иван Тбели и Мемнаджакели, великий Чкондидели, явившийся от царского дома, настоятель Вардзии и настоятель Пгндзапска, а также великий архимандрит Гаресджы, Гагец и Мацнабердец, и много других вельмож, также кадий Тбилисский и кадий Анийский и кадий Двинский и именитый шейх Сурмалинский, и с ними великий епископ Анийский, и епископ Бджнийский и епископ Ахпатский“.

Однако, список членов верховного судилища, ad hoc созванного в Двине в 1216 г., нуждается в пересмотре, уточнении и, что самое главное, перегруппировке имен участников соответственно их сословно-кастовой и конфессиональной принадлежности, как мы предлагаем, по 6 признакам, с последующим сведением таковых к 6 основным группам:

1. Представитель грузинского царского двора, царского дома (и, одновременно, грузинской высшей церковной иерархии)—первый визирь, государственный секретарь и Чкондидский митрополит Орофрий.

2. Представители грузинской феодальной знати—Мемна Джакели и другие вельможи.

3. Представители армянской феодальной знати—князь Бупак, тесть Липарита Еликумовича Орбеляна, главный камергер или гофмейстер; князь Марцуан или Марцпан, сын Саргиса, внук Амазаспа, Мамиконян Дсегский; а также владельцы Гага и Маднаберда или Махканаберда (по-груз. Манкаберда), имена коих не упоминаются.

4. Представители грузинского (халкедонитского) духовенства—Иван или Иоанн, епископ Тбетский (в Тао-Кларджии); священно-архимандрит, т. е. архиепископ или митрополит, Гареджийских пустынь (около нын. Караяз, к северу от Куры); и настоятели-игумены халкедонитских монастырей Вардзийского (в Месхия-Джавахеги) и Пгндзапского (в Лори или Бджни?).

5. Представители армянского (антихалкедонитского) духовенства: Григорий, сын Апугамра, архиепископ Анийский; Иоаннес Ха-

ченец, епископ Ахпатский; и епископ Бджинийский, имя которого не устанавливается.

6. Представители магометанского (мусульманского) духовенства: кадии Тбилисский, Анийский и Двинский, а также „именитый“ шейх Сурмалинский, имена коих также остаются неустановленными.

Нужно еще отметить, что решение чрезвычайного верховного суда было основано на принципе полной веротерпимости и свободы совести, при участии в споре между антихалкедонитской и халкедонитской сторонами, как между истцом и ответчиком, третьей совершенно нейтральной конфессиональной группы в лице 4-х духовных сановников из магометан; причем таковое (решение), вынесенное в пользу Норавакского монастыря, т. е. антихалкедонитской стороны, было одобрено и утверждено Иванэ Атабаком, который, как известно, был халкедонитом.